

Անշուշտ անհաշտ վրացին լաւ աչօք պիտի չնայէր այս մեծ պատնէշին, զըր կը կանգնէր լոռիի հայ թագաւորութիւնը իր առջեւ եւ որ մի անդամ ընդ միշտ պիտի ապահովէր մայր Հայաստանը ըստ կամի օտնձգութիւններէ եւ պիտի հաստատէր հիւսիսային նահանգներուս անկախութիւնը: Սկսաւ երկարատեւ կորւ մը լոռիի թագաւորներու եւ զրաց մէջ, ինչպէս կը տեսնուի կիրակոսի խօսքերէն (Էջ 72): “Իսկ Կիւրիկէ Բագրատունի որ ի լոռէ քաղաքէ, զամենայն ժամանակս իւր կացեալ ընդդէմ զրաց ի հաստատութեան պահէր զհայրենիս իւրու: Սակայն այս անդամ ալ տեսաւ վրացին որ պատուաւոր կոռուով պիտի չկարենար տիրանալ այս գաւառներուն ու դիմեց խորամանկութեան եւ յաջողեցաւ: “Եւ յետ մահուան (Կիւրիկէ Ա.) գաւեալք ի վրաց որդիք նորա՝ ելեալ ի տանէ հայրենեաց գնացին ի Պարսիկս՝, Դաւիթ եւ Աբաս եւ առնուն ի նոցանէ ի ժառանգութիւն զջաւուշ եւ զՄածնարերդ եւ զայլ տեղին...” (Կիր. 72): Հսու ալ հանգիստ չեն գտներ. քիչ ետք Պարսիկները սկսան նեղել ու վերջապէս Տաւուշ ամուր բերդը ձեռքերնէն առին, եւ Կիւրիկէներու ցեղը ստիպուեցաւ Մածնարերդի մէջ ամփոփուիլ (Կիր., Էջ 72 եւ Սամուկլ, Էջ 133): Բայց կ'երեւայ թէ վերջէն կամ բարեկամութեամբ եւ կամ պատերազմով տիրեցին Նոր Բերդին, ինչպէս որ Միկիթ. Այրվ. (Էջ 58) կ'ըսէ. “Իսկ ի Պարմէ թագաւորացն Բագրատունեաց մնացին ի Վերս եւ ի Մածնարերդ եւ ի Նոր Բերդ, որք կալան զբազում գաւառս եւ շինեցին բերդս բազում:” Թէպէտ Գեմտրէի վրաց թագաւորին որդին Դաւիթ “այնքան բարեսրտութիւն ցուցանէր՝ մինչ զի առաքէր եւ կոչէր զթագաւորն Կիւրիկէ Բ (1185-ին) որդի Դաւիթի (Անհողին) թագաւորի Բագրատունւոյ, եւ խոստանայր նմա դարձուցանել ի նա զժառանգութիւն նորա, զոր նախնեացն իւրոց հանեալ էր ի նմանէ եւ այսպէս պարզեւոք յուղարկէր զնա ժամադիր եղեալ նմա (Հայապատում Բ, Էջ 389), սակայն տարաժամ մահը արդելք եղաւ արդարութեան հատուցան: Այնուհետեւ արտաքսուած իրենց բնիկ հայրենիքէն մնացին ժամանակ մը օտար երկիր առանձին բերդերու մէջ. վերջին իշխանը կը յիշուի Սարգիս որ որդի էր թաղիադինի (1257ին): Իսկ թէ անկէ ետք ի՞նչ եղաւ Կիւրիկէներու

ցեղը, չի գիտցուիր. թէպէտ շատ հաւանական է կարծել թէ Ղարաբաղի Մելիքներն, որոնք նմանապէս նոյն բերդերուն մէջ ամրացած էին, յառաջ եկած ըլլան կիւրիկեան՝ Բագրատունի հայ ցեղէն:

(Ըստ Հայութիւնի)

Հ. Ղերանդ Մովսէսսան



## ԶԵՇԵՐՄԵՇԵԼԻ ԺՈՂՈՎՐԴՈՒԿԵՆ

### ԲԵՆԵՇԻԽՈՒԹԻՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ:

Ժողովրդական բանահիւսութիւնն այնքան էլ զարգացած չէ Զահարմահալի գաղթական գիւղացիների մէջ եւ դա հասկանալի պատճառով. մի ժողովուրդ, որ դարեր շարունակ տնտեսական անմիտթար դրութեան մէջ է գտնուել եւ հացի խնդիրը կօշմարի նման ծանրացել է նրա սրտի վրայ, բնական է, որ բանաւոր գրականութիւնը չի կարող նրա մէջ զարդացած լինել: Պատմութիւնն ակներեւ ապացոյց է մեր ասածին. եւ այդ է պատճառը, որ ժողովրդական բանահիւսութեան տեսակները Զահարմահալի ժողովուրդի մէջ հատ ու կտոր են: Մենք շըշեցինք Զահարմահալի բոլոր հայաբնակ գիւղերը, — Դէյշէն, Մամուռան, Ակասեան, Ներքին-Քօնարք, Վերին-Քօնարք, Մուշիգան, Շահրուլաղ, Սինագան, Աղբուլաղ, Մամուքա, Հաջիարագ, Սիրաք, Ահմադաբագ, բացի Բալիսլուից, — եւ հաւաքեցինք այն ամենը, ինչ որ պտտում էր ջահէլ աղջիների, հարսների եւ պառաւ կանանց բերաններում: Դրանք մէծամասնութեամբ մանկական, սիրային, հարսնեկան, սդոյ, երգիծական, տօնական, կրօնական պարզ ու անարուեստ բանաստեղծութիւններ, աղօթքներ, մանկական խաղեր, հէքեաթներ, հանելուկներ, առածներ, օրհնանքներ, երդումներ ու մնոտիապաշտութիւններ են, որոնց մէջ գերազանցօրէն երեւան է գալիս գիւղացիների սիրտն ու հոգին, այսինքն նրանց զդացմունքներն ու մաքերը, իդէալներն ու ձգտումները, կրօնական ու բարյական հայեացիները, հաւատալիքներն ու սովորութիւնները, նիստ ու կացը, վարք ու բարքը: Աւելին.

1 Պարսիկ ըսելով մեր միջին դարու պատմակիները շատ անդամ կը հասկեան Պարմի նահանգն, որուն մայրաքաղաքն էր Պարտաւ:

բանաւոր գրականութեան այդ տեսակների մէջ անդրադառնում է գիւղացիների անցեալ ու ներկայ արտաքին ու ներքին կեանքը, որի մասին պատմութեան մէջ ոչինչ չկայ յիշուած:

Թէ ե՞րբ եւ որտեղ են յօրինուել բանահիւսութեան այդ պատառիկները, յայտնի չէ: Այսպանը միայն պարզ է, որ նրանք ստեղծուել են տարբեր ժամանակներում եւ տեղերում, կեանքի բազմազան դէպքերի ու անցքերի աղդեցութեան ներքոյ, եւ բերանից բերան, սերնդից սերունդ անցնելով՝ տարածուել են Չահարմահալի բոլոր հայաբնակ գիւղերում:

Այդ երգերի հեղինակներն ու տարածողներն եղել են գիւղական ջահել հարսներն ու աղջիկները, որոնք մինչեւ այսօր էլ դեռ սրբութեամբ պահել պահպանել են իրենց բանահիւսութեան հատ ու կտոր փշրանքները:

Այդ թանկագին կտորները, որոնք մինչեւ այժմ էլ անտես են մնացել մեր բանահաւաքների կողմից եւ անհետանալու ու մոռացման վիճակին են մօտեցել, գեղարուեստականութեան տեսակէտից աչքի են ընկնում իրենց անկեղծութեամբ եւ զգացմունքների ու պատկերների պարզութեամբ: Այժմ այսեղ առաջ բերենք իւրաքանչիւրն առանձին գաղափար տալու համար նրանց ներքին իմաստի բովանդակութեան եւ գլխաւորապէս Չահարմահալի բարբառի մասին<sup>1</sup>:

### 1. Մանկական երգեր:

Մանկական երգերի տեսակէտից աղքատ է Չահարմահալի ժողովրդական բանահիւսութիւնը: Այդ ուղղութեամբ յօրինուած երգերից ձեռք բերինք հազիւ ինը կտոր, որոնց հիմը համարեա միեւնոյնն է՝ գովեստը, միայն բովանդակութիւնով ու արտաքին ձեւով են զանազանում նրանք միմեանցից: Այդ երգերը երգում են մայրերն ու աղջիկները իրենց տան փոքրիկներին խաղացնելիս: Տեսնենք:

### Ա.

Մայրը բռնում է մանկիկի թաթիկները եւ ծափահարելով՝ երգում:

<sup>1</sup> Ցեւեալ բարբառի երգերը հաւաքելիս՝ օգնել է մեզ բնիկ Չահարմահալի եւ ուսուցիչ պր. Կարապետ Մանսուրեանը, որին յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնները:

Մէ տղա ունենք, մէ տուն է, Գուս կանչէցէք, գա տէսնենք. Տէյտէրի քաքուլ ունի, Մօնթէրու ձալլէր ունի, Թէլթէր քամուն չի տանի. Զանդամանի հորըն է, Քալանթար Սարգսի թոռն է. Էս բէմէն էն բէմըն է, Բէմատակում ջուր խմի, Սուրբ սէղանում կուտ կուտի. Էրկթէ — էրկթէ մարթիքը, Փէդէ — փէդէ կնանիքը, Զառ քաքուլով տղէբը, Փունջ մանիշագ հաշնէբը, Հաշնէրու միշի որն է սիրուն. — Կառձ ու բօլորը. Տղէբանց միշի որն է սիրուն. — Թօփ — թօփ քաքուլը:

### Բ.

Մայրը երեխային դնում է ափերի մէջ եւ տարութերելով՝ երգում:

Դօլս ես, դօլ — դօլ ես, Նօղամանիս դուլաբն ես. Եալսութիս վշրանքն ես. Ալմաղիս գլխանքն ես. Սօվդագարիս ձաքն ես. Ղալամքարիս թագն ես. Դու իմ սիրուն տղէն ես, Դու իմ օսկէ ջղէն ես:

### Գ.

Մայրը շնորհաւորում է որդու Զափիկը.

Ա տղա — տղա, Գու ալ կապավօր, Ղողի շալ կապավօր, Դու իր հայոց դաքավօր. Բօթլով գինին խտուրն, Ասամանի կապավօր, Գո Զադիքը շնհավօր:

### Դ.

Դան արա, դանդան արա, Ղոշ գառը քի մատաղ արա. Օսկուր քի սայեա արա, Մէջն նստէ, գիվան արա:

### Ե.

Մայրն աղջկայ թաթիկները ծափահարելով՝ ասում է.

Ախչեգու ախչա ունի, Համամի բօխչա ունի, Զառու սանդուխչա ունի, Մարթու գնա՝ տուն ունի,

Ճռմուկներուն բուն ունի,  
Դէ բունի, բունի ճռմուկներ։  
Համամ գնացած ախչեց,  
Վօդներդ վլացած ախչեց,  
Զուրաբ ջհայսաբօվ ախչեց,  
Փայ ու բաժինքօվ ախչեց։

## Զ.

Ախչեց ունենք ըռանդին,  
Պահէլ ենք՝ տանք փռանդին։  
Գռանդն էկաւ մէյ դուռը,  
Օսկին համրէց հօր բուռը.  
Վով արժան է գա տանի,  
Վով արժան չէ չռտանի.  
Յաճէրը ցոյդը տանի,  
Վօդները ձունը տանի։

## Է.

Մայրը շնորհաւորում է աղջկայ Զատիկը.

Օվանա ջան, Օվանա,  
Ուրախ Զադիդ լուսանա.  
Բաբիդ գա Հնդստանա,  
Բէռնէր բէրի քաթանա.  
Քաթան դօշագ տակիտ է,  
Զառ թակալէն հաքիտ է։

## Ը.

Քոյրն իր եղբօրը խաղացնելիս՝ ասում է.  
Ախպէր, ախպէր, ջան ախպէր,  
Մէջկդ գօլստան ախպէր.  
Կապա կարեմ կառմ դուքայ,  
Դուքմա շարեմ խաչ դուքայ.  
Կարմիր կովանդ ինչ արիր,  
Ծառի տակը դում արիր.  
Ըերէփ — չերէփ կթէցինք,  
Գդալ — գդալ բաժնէցինք.  
Հօռոմն ասաւ. ինձի տուր.  
Կաքաւն ասաւ. ինձի տուր.  
Ոչ Հօռոմն, ոչ կաքաւին,  
Յամմէն ծառին մի փշատ,  
Իմ ախպտանց ումբը շատ։

## Թ.

Ախպէրս շահի դուռը չոքած էր,  
Զօգուռը դօշին քօքած էր,  
Փողը ծնդին կիտած էր.  
Հայրն էկաւ, բարօվ տվէց,  
Թուրքն էկաւ, քարօվ տվէց,  
Նստան էկաւ, կովօվ տվէց։

## Զ. Սիրային:

Ժողովրդական սիրային բանահիւսութեան  
բաժինը հարուստ է մեղանում. դրա գլխաւոր

պատճառն այն է, որ այդ ճիւղն ամէնից շատ է  
գրաւել մեր բանահաքների ուշադրութիւնը,  
որով բազմաթիւ թանկագին կտորներ կան հաւ-  
աքուած Մ. Մ. Միանսարեանի «Քնար հայ-  
կականին, Արիստակէս վարդ. Սեդրականի  
«Քնար Մշեցւոց եւ Վանեցւոց ի, Հ. Արիստակէս  
Տէվկանցի «Հայերդ ի, Վահան վարդ. Տէր-  
Միանսարեանի «Անգիր դպրութիւն եւ առակը ի,  
Սարդիս Հայկունու «Ժողովրդական երդ, առած,  
Հանելսկին, ինչպէս եւ կոմիտաս վարդ. եւ  
Արեղեանի «Հազար ու մի խաղ ի, Երուանդ Լա-  
լյայեանի «Ազգագրական հանդէս ի, Հ. Ա. Խ.  
Խւթիւճեանի «Բիւրակն ի եւ այլ ազգագրական  
թերթերի ու ազգային-ժողովրդական երդ արան-  
ների մէջ։

Այդ երգերը մեծամասնութեամբ զգաց-  
մունքով լի, գողորիկ նուագներ են, որոնց մէջ  
կան օրինակ, այսպիսի տողեր.

Ան կանեմ, արուն կու գայ,  
Սեւ սրտիս գարոն կու գայ.  
Կորուցել եմ իմ եարը,  
Ով գիտէ, երբ տուն կու գայ։

Չահարմահալի ժողովրդական բանահիւ-  
սութեան մէջ եւս կան մի քանի սիրային նուագ-  
ներ, որոնք իրենց կառուցուածքով եւ բովանդա-  
կութեամբ բաւական բանաստեղծական են.  
Դրանցից մէկի մէջ գեղջկուհին սիրազեղ սիր-  
ալ բանալով՝ պատկերացնում է իր անսահման  
սէրն ու զգացմունքը։ Կէս օր է. սիրական ազիզը  
բնութեան ծոցում, սարի լանջին, հողի կուրծքն  
է պատռում, իսկ եարը պատրաստել է «Ղայ-  
լանը», «Թամրաքին», «Ղանդը» եւ իր աղեղին  
տուն է կանչում։

Աղիղ, աղիղ տուն արի,  
Հարմէքդ չարվադարի,  
Ղայլանդ չաղի արի.  
Թամրաքուդ վայթի արի.  
Զուրդ դուլարի արի.  
Կրակդ դանդի արի.  
Տուն արի աղիղ, տուն արի։

Սա չէ յիշեցնում ձեզ Աւետիս իսա-  
հակեանի «Մաճկալ»ը.

Դագրած, բէկարած եար ջան,  
Ամպերն եան, գէհ, արի.  
Բէկարած ջանիդ զուրպան,  
Ծարից թեւ առ, թէզ արի։

Այս օրինակ սիրերգների մի գեղեցիկ  
նմուշ է նաև հետեւեալու



Վիրեւ էլանք կտուրը, տէսանք՝  
Վով է գալիս, վով է գալիս.  
Յիրեք թիփ ձիավոր է գալիս.  
Վոյն է սիրուն, վոյն է սիրուն,  
— Նարինչ ձիավոյն է սիրուն.  
Վոյն է սիրուն, վոյն է սիրուն,  
— Ճերմագ գդագվոյն է սիրուն.  
Վոյն է սիրուն, վոյն է սիրուն,  
— Կանանչ կապավոյն է սիրուն:

### 3. Հարսանեկան երգեր:

Ինչպէս իւրաքանչիւր ազգ, այնպէս էլ  
Հայ ժողովուրդն իր կեանքի անհուն վշտերի  
եւ տանշանքների հետ ունի ուրախութեան ու  
խրախճանքի օրերը, որոնց մէջ նշանաւոր տեղ  
է բռնում հարսանիքը, որ իւրաքանչիւր գիւղ  
կամ գաւառ տօնում է առանձին ծէսերով:  
Այդ հանդիսի շուրջը Հայ ժողովուրդը հիւսել  
է բազմաթիւ երգեր, որոնց մէջ պատկերաց-  
ւում է հարս ու փեսի, ինչպէս նաև նրանց  
շրջապատող հարսնեւորների հոգեկան ուրախ  
տրամադրութիւնն ու ապրումները: Անշուշ  
հին, հեթանոս հայերի մէջ էլ եղել են այդ-  
պիսի երգեր, որոնցից սակայն մեղ հասել է  
միայն մի կտոր, շնորհիւ մեր պատմահօր  
Մովսէս Խորենացու. այդ երգի մէջ երգւում  
է Արտաշիսի եւ Սաթենիկի հարսանեկան հան-  
դիսի մի դրուագը.

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշիսի,  
Տեղայր մարդարիտի հարսնութեան Սաթենիկան:

Գուսանական այս փշրանքը մեղ գաղա-  
փար է տալիս, թէ մեր թագաւորներն ու  
իշխանները ինչպիսի մեծ հանդիսով էին կատա-  
րում իրենց հարսանիքը: Խոկ ազգային այլ յի-  
շատակարաններ նկարագրում են, թէ հար-  
սանեկան այդ հանդէսներն աւելի հրապարա-  
կական ձեւ էին ստանում, մանաւանդ թագա-  
ւորների ամուսնութեան ժամանակ: Այրերն եւ  
կանայք, երիտասարդներն ու ջահէլ աղջիկները  
ձեռք ձեռքի տուած՝ հրապարակներում պարում  
էին “պար” իրեւ “պարանցիկը”, ու երգում  
երգեր, որոնցից յիշում է “ցուցք”, կամ  
“երգք ցցոյն”:

Մեր ժողովուրդական գրականութիւնը բա-  
ւական հարուստ է հարսանեկան երգերով,  
որոնցից շատերը հաւաքուած են գիւտ քհնյ.  
Աղանեանի “Լումայո-ի”, Երուանդ Լալայեանի  
“Ազգագրական հանդէս, -ի, Խւթիւթեանի

“Բիւրակնո-ի եւ այլ ազգագրական հանդէս-  
ների մէջ:

Հարսանեկան մի քանի երգեր գոյութիւն  
ունեն նաև Զահարմահալում, որոնց մէջ պատ-  
կերացւում է գիւղացիների հոգեկան ուրախ  
զգացմունքները: Այսպէս, Զահարմահալցի երի-  
տասարդը մեծացել, արբունքի է հասել, մայրը  
գնում է նրա համար մի սիրուն աղջիկ ճա-  
րելու: Տեսէք, նա ինչպիսի Փանտաստիկական  
պատկերներով է դրուատում իր սիրուն հարս-  
նացուին:

Կտուր-կտուր վարեցինք,  
Մէ սիրուն ախչիդ ճարէցինք.  
Գնացինք, տէսանք քնած էր,  
Վայթն յէրէսին փռած էր,  
Գաթէն ծոցը փլուած էր,  
Կուռը ջերը փնջնած էր,  
Խնձօրը ձեռը խածած էր,  
Արրէշում խալին փռած էր,  
Ախչիզը վրէն քնած էր,  
Օսէ ջամը կուծած էր,  
Էրծթէ նռնէրը շարած էր,  
Ախչիզը թուխ էր՝ պաշէցինք,  
Խնձօրը փուխ էր՝ խածէցինք:

Հարսանիք է. սիրուն հարսին տուն են  
բերում՝ սազ ու դարով եւ թրմաշալ քողով:  
Բոլորն էլ հոգեկան ուրախ տրամադրութեան  
մէջ են. հնչում են անուշ երգերը եւ խնդում  
սրտերը: Թագաւորի քրոջ սիրտն էլ է տրո-  
փում անհուն ուրախութիւնից եւ ահա նա  
լարում է քնարն ու բանաստեղծում:

Ախպյո հաշնիք սազօվ է,  
Հայսին բէրինք նազօվ է,  
Հայսի նազը կըքաշենք,  
Գլխին թրմաշալ քաշենք  
Յեղնէն բութազառ քաշենք:

Ապա թագաւորի գովքը, որ երգում  
են “ծառ”, գովելու ժամանակ: Ծառը փոխա-  
րերական մոքով թագաւորն է. նրա մայրը  
մի մատուցարանի մէջ քաղցրաւենիք կամ չամիչ  
ածելով՝ զնում է հանդիսականների առաջ,  
ապա թագաւորը, քաւորը եւ խաչեղայրը  
կանգնում են “Փարդի”, առաջ դրա վրայ  
հանդիսականներից մինը երգում է.

Օրհնեալ է Աստուած:

Օրհնեալ է Յիսուս:

Օրհնեալ է Քրիստոս:

Դաքվորն բէրինք քե նման,

Քու կանանչ յարէվի նման:

Էն Սուսան-որբուլն, օր բացվել է,

Օ՛ բացվել է, յարէվի նման:

### Յետոյ խմբովին թնդացնում են.

Սուրբ կարապետայ՝  
Օքնութունով,  
Օքնութունով,  
Ծառսի ծաղկեցաւ,  
Ծառ ծաղկեցաւ,  
Ճուխկ բաղմեցաւ,  
Կանանչ ու կարմիր:

Այժմ թագաւորին հինայ են տանում  
կամ գնում են նրան բաղնիսից բերելու: Բաղնի  
դուան առաջ զարդարուն հարսներն ու ջահել-  
սերը պար են բռնել, ծափ տալիս, ինդում,  
խաղում, իսկ սազն անուշ ծլւրում է ու լարում  
զգացմունքները: Եւ ահա խմբովին թնդացնում,  
թագաւորի գովքն են անում.

Դաքվօրի յերեսը պարզ,  
Տղամարթիքն ապրած.  
Դաստ բըդաստ,  
Դուշմանը սազ,  
Զին վաղղուդ,  
Թուրը կտրուկ,  
Երկնքէն ցող,  
Գետնէն պտուղ.  
Հայ շօբօշ,  
Հայ շօբօշ...

### 4. Սգոյ երգեր:

Հահարմահալի ժողովրդական բանահիւ-  
սութեան մէջ կան նաեւ մի քանի սգոյ երգեր,  
որոնց գեղջկուհիներն ողբաձայն արտասանում  
են իրենց սերելիների մահուան ժամանակ: Եթէ  
մեռնողը յայտնի անձնաւորութիւն է, օրինակ  
գիւղի տանուտէրը, գովում են այսպէս.

Մաջլս նշին բարամ ջան,  
Քեաղխուդա նշին բարամ ջան,  
Իմ խան շնաս բարամ ջան:

Եթէ տան հայրն է մեռնողը՝ ողբում են.

Մէյ տան սութուն բարամ ջան,  
Մէյ տան բարաքաթ բարամ ջան,  
Մէյ իւլք ու խրաթ բարամ ջան,  
Մէյ մէհնքեաշ բարամ ջան:

Եղբայրը ողբում է քրոջը.

Քուրում, քուրում, քուրում ջան,  
Իմ աղիղ քուրում ջան,  
Իմ ձեռի եայլուղ քուրում ջան:

<sup>1</sup> Ցիւեալ տունը երգում են բոլոր սրբերի անուն-

### Քոյրը ողբում եղբօրը.

Բրար, բրար, բրար ջան,  
Զանիդ մեռնիմ բրար ջան,  
Պոկտաց խիզնիդ մեռնիմ, բրար ջան,  
Գառնէրդ բուալէն մնացին, բրար ջան:

### Մայրը ողբում է որդուն.

Բալամ ջան, բալամ ջան,  
Ազիզ գառնիկ, բալամ ջան,  
Սրդի ճրագ, բալամ ջան,  
Ծնդնէրս ծալէցիր, բալամ ջան,  
Կռնէրս կոտրէցիր, բալամ ջան,  
Բալամ ջան, աղեղ ջան:

Սովորաբար ողբի վերջին խօսքերի վոյ  
միւսները բարձրաձայն լալիս են եւ շատ անդամ  
իրենց վարսերը փետում, կրծքերին խփում,  
ծնկներին զարկում, գլուխները թակում եւ  
երբեմն էլ ուշագնաց ընկնում են:

### 5. Երգիծական:

Հահարմահալին գիտէ նաեւ երգիծել  
եւ մտրակել: Այդ ուղղութեամբ հիւսել է նա  
մի քանի սրամիտ երգիծական կտոր. օրինակ,  
Հետեւեալ փոքրիկ ոտանաւորը, որի մէջ պատ-  
կերացում է Լիվասեանցի գեղջուկի անաղնիւ  
ոգին: Մի անդամ Լիվասեանցի մի հայ գիւ-  
ղացի դաշտից գողանում է մի պարսկի կովը  
եւ տուն բերելով մորթում է: Պարսկը բոնում  
է աւազակ գիւղացուն, բայց նա ուրանում է իր  
արարքը: Դրա վրայ պարսկը նրանից պահան-  
ջում է երդուել եկեղեցու դռան առջեւ: Լի-  
վասեանցին եկեղեցու դռան շէմքին ծնրադրե-  
լով՝ ասում է.

Էյ սուրբ էգեղեցի,  
Դու ծանդոր տեղդ կէցի.  
Էս անիրավի կօվը մօրթէցի,  
Միսը խիզնոս կէրան,  
Կաշին էլ շինէցի ևնօցի:

Պարսկը հայերէն չի իմանում եւ կար-  
ծում է, թէ Հայն իսկապէս անկեղծ սրտով է  
երդուում, ուստի թողնում է եւ հեռանում:

Մի ուրիշ երգիծաբանութեան մէջ երեւան  
է գալիս գեղջուկի ատելութեան ոգին դէպի  
իր գրացի պարսկը: Երբ որեւէ հայ գեղջուկ  
պարսկի հետ ոին է ունենում, երեկոյեան ան-  
կողին մտնելիս՝ ասում է.

Հայրի որթի, հոգին սուրբ,  
Օքէն սատկի հըզար թուրք,  
Հայիցը մէ ճուտ,  
Են էլ սուտ:

Հետաքրքրական է նաեւ հետեւեալ երգիծական ոտանաւորը, որի մէջ գեղջկուհին ցոյց է տալիս իր նեղ ոգին.

Ախպէրս գնաց զումիշա,  
Տկի ձին էր ալաշա.  
Գեղ կանգրէցին թամաշա.  
Բոյթ ու բամբագ աբրէշում,  
Գէղի խիզան իմ ախպօր շուռ:  
— Տկով, տկով ջուր էկաւ,  
Խօսրօփ խանը շուռ էկաւ:

Ապա հետեւեալ երգիծական կտորը, որի մէջ պատկերացւում է գեղջուկ հարսի ճնշուած եւ ծանր դրութիւնը: Ազօթարանը բացւում է եւ հարսը մի հաց է գողանում. թէ ինչո՞ւ համար, արդեօք կեսուրը նրան քաղցած էր պահում, յայտնի չէ: Կեսուրը բռնում է հարսի գողութիւնը եւ չի կարողանալով տանել՝ նրան անգմօրէն ծեծում է. հարսն էլ սկեսրոջ ձեռքից ազատուելու համար՝ գնում է թըքանում: Այս ամբողջ պատմութիւնն ամփոփուած է եօթը տողի մէջ.

Լուսը լուսացաւ,  
Հայսը վեր կացաւ,  
Մէ հաց գողացաւ,  
Կէսուրն յիմացաւ,  
Տվէց՝ թուլացաւ.  
Գնաց թուլքցաւ,  
Օնչօվ չիմացաւ:

Ահա գեղջական քնարից երգիծական մի ուրիշ նմուշ, որը ասում է տէգրը, երբ ծեծում է հարսին.

Բէգզադ հայու,  
Կանչեմ դաս,  
Ծէծեմ լաս,  
Զընդզընդալով էրթաս,  
Նանիդ խաբար տաս:

Այսպիսի երգիծական յօրինուածքների մի յաջող նմոյշ կարելի է համարել նաեւ հետեւեալ մանկական կտորը.

Սանա, սանա Օվսանա,  
Քամար ունես մէ դանա.  
Մազէր ունես, մէ բանա.  
Միճիդ տվին վայդանա,  
Բա յուր ասիր, վայ նանա:

Ահեմաս, Յունաստար 1922: ԱրաՄ ԵՐԵՄԵԼԻՆ



## ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒՄՑ ԱՀ ԲԱՆԱՍՏԵՂԻՆԵՐ

### ՊԵՏՐՈՎ ԴՈՒՐԵԱՆ

ՆՐԱ ԿԵՑՈՒՅՆ ՈՒ ԵՐԿԵՐԸ

ԳՐԱԿԱՆ - ՔԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՈԽԾՈՒԹԻՒՆ

— (Շահագուշական)

ԺԲ.

Բանաստեղծական գործը:

Մինչեւ հիմա մենք մասնաւորապէս կանգչառանք Պետրոս Դուրեանի բանաստեղծական գործի վրայ:

Մենք աշխատեցինք այդ գործի զարգացման պարագաները պարզել, ցոյց տալ այն միջավայրը, որի մէջ առաջացաւ Դուրեանի բանաստեղծութիւնը, վերլուծել այն սոցիալական ենթական միջամարդական միջնոլորտը, որի արտայայտիչ հանդիսացաւ նա այնքան գեղեցիկ կերպով:

Այսպիսով, մեր աշխատութեան նախկին մասերի մէջ ինքնին արդէն բաւական բան ասուեց Պետրոս Դուրեանի ոչ միայն միւս գործերի, այլ եւ բանաստեղծական գործի մասին:

Ի նկատի ունենալով այն բոլորը, ինչ ու ասել ենք արդէն Պետրոս Դուրեանի մասին այսուհետեւ շատ էցելի եւ լայն ծաւալի պէտչակայ այլ եւս նրա բանաստեղծական գործը ամբողջացնելու եւ իբրեւ մէկ գեղարուեստակամ միութիւն ընթերցողի առջեւ պատկերացներու համար:

Եւ այժմ ահա անցնում ենք նրա բանաստեղծական գործին մասնաւորապէս:

1. Բանաստեղծական գործը իրուն հոգերանական ամրողութիւն:

Իր զանազան բանաստեղծութիւններ Պետրոս Դուրեան գրել է իր կեանքի զանազան տարիներում: Ինչպէս ընթերցողը գիտէ, ակեանքը շատ կարճ տեւողութիւն է ունեցել գրել է նա սկսած 1867 թուականից: Բայց կարեւոր բանաստեղծական էջերը գրեթե ամբողջապէս ամփոփուած են 1871 թուական մէջ: Այնպէս որ, բանաստեղծական տեսա